

**ՆԿԱՏԱՌՈՒՄՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՆԵՐ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱՀԱՎԱՔ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ԵՎ ՀԱՐԱԿԻՑ
ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

ՀՀ արդարադատության նախարարության կողմից մշակվել է «Հայաստանի Հանրապետության փաստահավաք հանձնաժողովի մասին» ՀՀ օրենքի նախագիծը (այսուհետև՝ Նախագիծ), որի վերաբերյալ առկա են հետևյալ առաջարկներն ու նկատառումները.

1. Հանձնաժողովի անվանումը պետք է նկարագրի ոչ թե իր գործառույթը, այլև նպատակը և առաքելությունը արտահայտի: Ուստի անհրաժեշտ է այն վերանվանել, օրինակ՝ Ճշմարտության և արժանապատվության, կամ Ճշմարտության, կամ Ճշմարտության և համերաշխության հանձնաժողով, և այլն:
2. Նախագծի 4-րդ հոդվածով ամրագրված են Փաստահավաք հանձնաժողովի (այսուհետև՝ Հանձնաժողով) գործունեության սկզբունքները, որոնցում ի թիվս այլոց մատնանշված է օբյեկտիվության և անկողմնակալության սկզբունքը, որոնց բովանդակությանն անդրադարձ է կատարվել նաև Նախագծի 7-րդ հոդվածում: Մինչդեռ, Նախագծում նախատեսված չէ հանձնաժողովի անդամի կողմից ինքնաբացարկ և վերջինիս բացարկ ներկայացնելու հնարավորությունը, ինչն ինքնաբերաբար կարող է հանգեցնել համապատասխան փաստերի գնահատման ընթացքում հանձնաժողովի անդամի կանխակալ վերաբերմունքի դրսևորման կամ կասկածի տակ դնել Հանձնաժողովի գործունեության անկողմնակալությունն ու օբյեկտիվությունը:

Առաջարկում ենք նախատեսել հանձնաժողովի անդամին բացարկ կամ վերջինիս կողմից ինքնաբացարկ ներկայացնելու հնարավորությունը:

3. Նախագծով առաջարկվում է հանձնաժողովի ձևավորում 9 անդամի կազմով: Անդամներից 6-ին առաջարկելու են խորհրդարանական խմբակցությունները՝ 2-ական թեկնածու յուրաքանչյուր խմբակցությունից, մեկ թեկնածու ՄԻՊ-ը, մեկին կառավարությունը և մեկ թեկնածու ԲԴԽ-ն: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ԲԴԽ-ն ըստ ՀՀ սահմանադրության 173-րդ հոդվածի անկախ պետական մարմին մարմին է, որը երաշխավորում է դատարանների և դատավորների անկախությունը, գտնում ենք, որ ԲԴԽ-ն ընդհանրապես բացի դատական համակարգում առկա խնդիրների լուծումից չպետք է ունենա լիազորություններ՝ մասնակցելու այլ մարմինների ձևավորմանը, այն էլ այսօրվա իրականության պայմաններում, երբ ԲԴԽ-ն դեռևս չի կարողանում ապահովել դատական իշխանության անկախության համար պատշաճ երաշխիքներ: Ընդհանուր առմամբ ՀՀ սահմանադրության 175-րդ հոդվածում թվարկված ԲԴԽ լիազորություններում այլ պետական մարմինների ձևավորմանը մասնակցության հարց չի քննարկվում և միայն նշվում է, որ դատական օրենսգրքով կարող են սահմանվել այլ լիազորություններ: ՀՀ դատական օրենսգրքը ոլորտային հարաբերություններ կարգավորող իրավական ակտ է, որը պետք է առնչվի բացառապես դատական իշխանությանը, և դրանով այլ պետական մարմինների ձևավորմանը մասնակցության լիազորության ընձեռումը հակասում է իրավական ակտի ոլորտային կարգավորման տրամաբանությանը: Եվ այս առումով ԲԴԽ-ն պետք է զբաղվի բացառապես դատական իշխանության խնդիրներով:

Առաջարկում ենք հանձնաժողովի անդամ առաջադրելու իրավունք ունեցող սուբյեկտների շարքից բացառել ԲԴԽ-ն և այդ իրավունքը փոխանցել ՀՀ Նախագահին:

Բացի այդ, Նախագծի համաձայն՝ Հանձնաժողովի 6 անդամներին առաջադրում են Ազգային ժողովի խմբակցությունները՝ յուրաքանչյուր խմբակցություն՝ 2-ական թեկնածու: Խմբակցության առաջադրած թեկնածուներից մեկը պետք է լինի այն հասարակական կազմակերպությունների առաջադրած թեկնածուներից ցանկից, որոնց կանոնադրական նպատակներից է մարդու իրավունքների պաշտպանությունը, Հանձնաժողովի իրավասության ոլորտներում գործունեությունը և որոնք վերջին

հինգ տարիներին իրականացնում են նման գործունեություն: Գտնում ենք, որ անթույլատրելի է, որ քաղաքական ուժերն իրենց նախասիրություններով առաջադրեն անդամների թեկնածուներին, քանի որ սա պետք է ապաքաղաքական մարմին լինի, որտեղ անդամներից որևէ մեկը չպետք է լոյալության զգացում կամ որոշակի կախվածություն զգա իրեն առաջադրած կուսակցությունից և դրա քաղաքական օրակարգից: Հանձնաժողովի կազմի ձևավորումը չպետք է որևէ կերպ պայմանավորված լինի քաղաքական ուժերի կոմպրոմիսներով կամ համաձայնություններով, այլ միմիայն հիմնվի սահմանված չափանիշների և սկզբունքների վրա:

Առհասարակ, Քենիայում, Թունիսում, մի շարք այլ պետություններում ստեղծված և գործող ճշմարտության հանձնաժողովների ուսումնասիրությունից բխում է, որ հանձնաժողովի բոլոր անդամների վերջնական ընտրությունն ու հաստատումը վերապահված է օրենսդիր մարմնին: Նախքան թեկնածուների քվեարկությունը խորհրդարանում կարող է ստեղծվել հատուկ հանձնաժողով, որը նախնական վեթինգի կենթարկի թեկնածուներին, կկազմակերպի խորհրդարանական լսումներ, որպեսզի պատգամավորներն ու հասարակության լայն շերտերի ներկայացուցիչները կարողանան թեկնածուներին հարցեր ուղղել իրենց պատկերացումների, անցած փորձի վերաբերյալ:

Անդամների թեկնածուներին պետք է առաջադրեն անկախ մարմինները, ապաքաղաքական հասարակության լայն շերտերը ներկայացնող միությունները. օրինակ՝ ՄԻՊ, քաղաքացիական հասարակության կազմակերպություններ, զոհերի համայնքների կառույցներ, ազգային փոքրամասնությունների համայնքներ և այլն: Ըստ այդմ, անհրաժեշտ է, որ պետությունը խորհրդակցություններ սկսի զոհերի համայնքների հետ՝ որոշելու համար ընտրության մեխանիզմները և այլն:

Ինչպիսի չափանիշներ պետք է առաջադրվեն հանձնաժողովի անդամի թեկնածուին.

-տարիքային շեմը հնարավորինս ցածր՝ ներառելու համար երիտասարդության ակտիվ զանգվածի ներկայացուցիչներին,

-ներկայացվածություն Հանրապետության բոլոր մարզերից

-գենդերային բալանսը պետք է պահպանվի

-թեկնածուները պետք է լինեն բարձր բարեվարքությամբ օժտված, անկողմնակալ, որևէ կուսակցության անդամ չլինեն, որևէ քաղաքական ուժի հետ փոխկապակցված չլինեն, ներգրավված չլինեն մարդու իրավունքների խախտումների կամ կոռուպցիայի մեջ, հանրության մեջ հեղինակություն վայելող անձինք լինեն,

-բարձրագույն կրթություն և մասնագիտական ձեռքբերումների պատմություն ունենան իրենց աշխատանքի բնագավառում:

4. Եթե վերոնշյալ առաջարկները չընդունվեն, ապա պետք է հաշվի առնել, որ թեև «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի 2-րդ հոդվածով նախատեսվում է, որ «Հայաստանի Հանրապետության փաստահավաք հանձնաժողովի անդամները ընտրվում են «Հայաստանի Հանրապետության փաստահավաք հանձնաժողովի մասին» օրենքով և հատուկ ընթացակարգի մասին Ազգային ժողովի որոշմամբ սահմանված կարգով, գաղտնի քվեարկությամբ, պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ»: Թեև նույն հոդվածով նախատեսվում է Ազգային ժողովի խմբակցությունների՝ թեկնածուներ առաջադրելու իրավունքը, սակայն նկատի ունենալով, որ Հանձնաժողովի անդամներն ընտրվում են պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ, քաղաքական մեծամասնությունը հեշտությամբ կարող է արգելափակել ընդդիմության կողմից առաջադրված թեկնածուների ընտրությունը:

Առաջարկում ենք Հանձնաժողովի անդամների ընտրության ցենզը պետք է զգալիորեն բարձրացվի՝ ապահովելով քաղաքական փոքրամասնության արդյունավետ մասնակցությունը հանձնաժողովների անդամների ընտրության գործընթացում:

5. Նախագծի 13-րդ հոդվածով սահմանված են հանձնաժողովի իրավասության և գործունեության ուղղությունները, մասնավորապես, նախատեսված է, որ հանձնաժողովի գործունեությունն ուղղված է 1991 թվականի սեպտեմբերից մինչև 2018 թվականի ապրիլ ամիսը (այսուհետ՝ ուսումնասիրվող ժամանակահատված) տեղի ունեցած՝ սույն հոդվածով նախատեսված դեպքերի և իրադարձությունների (այսուհետ նաև՝ դեպքեր և իրադարձություններ) շրջանակում կամ դրանց հետևանքով կատարված մարդու իրավունքների հիմնարար և պարբերական խախտումների (այսուհետ նաև՝ խախտումներ) վերաբերյալ փաստերի հավաքագրմանը և ուսումնասիրմանը, որոնք ներառում են.

- 1) համապետական և տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների և հանրաքվեների կազմակերպում և անցկացում,
- 2) հետընտրական գործընթացներում տեղի ունեցած քաղաքական հետապնդումներ,
- 3) հանրության գերակա շահերի ապահովման նպատակով սեփականության օտարումներ,
- 4) անձանց սեփականության իրավունքից զրկելու այլ դրսևորումներ,
- 5) ոչ մարտական պայմաններում զինձառայողների մահվան դեպքեր,
- 6) վերոնշյալ դեպքերի և իրադարձությունների հետ համակարգային առումով փոխկապակցված այլ դեպքեր և իրադարձություններ, որոնց Հանձնաժողովը անհրաժեշտ և հիմնավոր կհամարի անդրադառնալ:

Միաժամանակ, ոչ մեծ վաղեմություն ունեցող մարդու իրավունքների զանգվածային և համակարգային էական այլ խախտումները չեն ընդգրկվել Հանձնաժողովի գործունեության ուղղություններում, այդ թվում՝ օրինակ խաղաղ հավաքների ընթացքում մարդու իրավունքների զանգվածային խախտումները, խոշտանգումների դեպքերը:

Ավելին, չնայած նրան, որ քաղաքական հետապնդումների մեծ մասը արձանագրվել են ընտրություններից հետո, սակայն հաշվի առնելով խնդրի սրությունը՝ կարելի է դիտարկել այս խախտումները ավելի լայն համատեքստում:

Համապետական և առավել ևս տեղական ինքնակառավարման ընտրությունների և հանրաքվեների ընթացքում իրավունքների խախտումների վերաբերյալ օբյեկտիվ տեղեկությունների ստացման հնարավորությունը մոտ 30 տարվա վաղեմություն ունեցող իրադարձությունների առնչությամբ խիստ սահմանափակ է, և դրանց արդյունքները արժանահավատությունը կասկածելի է լինելու ու շահարկումների առիթ է ստեղծելու: Իրավական առումով նախկին բոլոր ընտրությունների վերաբերյալ գնահատականները կարող են տրվել այլ եղանակով՝ իշխանության զավթման և դրա մեխանիզմների, օրինակ՝ ընտրություններ, արձանագրման միջոցով:

Արդի ՀՀ սահմանադրական դատարանի շուրջ ստեղծված ճգնաժամի հանգուցալուծման տեսանկյունից կարևոր է նաև դիտարկել, թե յուրաքանչյուր ընտրությունից հետո ՄԴ-ում ընտրությունների արդյունքների վիճարկման դիմումները ինչպե՞ս են քննվել, արդյո՞ք ՄԴ-ը նպատել է սահմանադրության հիմունքների և մարդու իրավունքների պաշտպանությանը:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ հանձնաժողովն իր գործունեությունը պատշաճ իրականացնելու համար սահմանում է իր գործունեության իրականացման, ներառյալ՝ իր իրավասության ներքո ընդգրկված հարցերի ուսումնասիրման ծավալը՝ հաշվի առնելով ուսումնասիրման ենթակա հարցերի բնույթը, իր զեկույցների կազմման և հրապարակման ժամկետները, իր աշխատողների քանակը, ինչպես նաև իր գործունեությանն առնչվող այլ հանգամանքներ: Նման մոտեցումը կարծում ենք արդարացված չէ, քանի որ իրադարձությունների ուսումնասիրության ծավալը պետք է լինի այնպիսին, որ

հնարավորություն ընձեռվի ամբողջական գնահատական տալ ենթադրյալ խախտումներին, ուստի ուսումնասիրության ծավալը չպետք է կախվածության մեջ դրվի օրինակ՝ աշխատողների քանակից, զեկույցի կազմման ժամկետներից: Նման իրավիճակներում պետք է գնալ լուծումների, որոնք հնարավորություն կտան ընդլայնել կադրերը և կորոդությունները:

Հանձնաժողովի եզրակացությունների և առաջարկների վերաբերյալ 36-րդ հոդվածի 5-րդ մասի 6-րդ կետում ամրագրված կարգավորումները գտնում ենք արդարացված են՝ կապված խախտումների արձանագրման համակարգային և ինստիտուցիոնալ մոտեցումների հետ: Միևնույն ժամանակ, առաջարկում ենք, որպեսզի անհատական խախտումների դեպքերի վերաբերյալ գնահատականները անդրադառնան բացառապես իրողությունների և ոլորտների վերաբերյալ ընդհանուր գնահատականները ձևավորելիս: Հակառակ պարագայում պետք է նկատի ունենալ, որ անգամ օբյեկտիվորեն կարող է ձևավորվել խտրական մոտեցում անհատական դեպքերի վերաբերյալ, քանզի օրինակ՝ կյանքի իրավունքի և խոշտանգումների արգելքի իրավունքի խախտման դեպքերի անհատական գնահատականները չեն կարող ամբողջականորեն արտացոլել նախագծով հանձնաժողովի ուսումնասիրության ժամանակահատվածի բոլոր դեպքերի գնահատականը, ուստի կառաջանա տարաձայնություն հանձնաժողովի գործունեության նպատակի շուրջ: Այլ կերպ ասած՝ հանձնաժողովի խնդիրը պետք է լինի որոշ անհատական դեպքերի մատնանշումով համակարգային խնդիրների վերաբերյալ եզրակացությունները երկրի բարձրագույն ներկայացուցչական մարմին՝ ուղարկելը՝ հետագա իրավական գնահատականներին անդրադառնալու նպատակով: Օրինակ՝ հանրային գերակա շահ ճանաչելու դեպքերով Հանձնաժողովը իրավական հիմքերի և որոշ անհատական դեպքերի ուսումնասիրությամբ պետք է ցույց տա, որ դրանք իրականում պայմանավորված են եղել ոչ թե հանրային գերակա շահով՝ մատնանշելով օրենքի հղումները և փաստացի գործընթացը, այլ անհատական խմբային ոչ իրավաչափ շահերով, ինչպես նաև պայմանավորված էլ ողջ գործընթացի վերաբերյալ հանձնաժողովի եզրակացությունը հնարավորություն կտա իրավական գնահատականի արժանացնել քննարկվող ժամանակաշրջանի իշխանության և պատասխանատու պաշտոնյաների գործողությունները:

Առաջարկում ենք.

- Ընդլայնել մարդու հիմնարար և պարբերական խախտումների դեպքերը, որոնց վերաբերյալ Հանձնաժողովն իրավասու է ուսումնասիրություն իրականացնել, ներառելով կյանքի իրավունքի և իրավապահ մարմինների կողմից խոշտանգումներից, անմարդկային և նվաստացուցիչ վերաբերմունքից զերծ մնալու իրավունքի խախտումների փաստերի վերաբերյալ տեղեկությունների, տվյալների հավաքումն ու ուսումնասիրությունը, ինչպես նաև հավաքների (ոչ հետընտրական գործընթացների հետ կապված) ընթացքում մարդու իրավունքների խախտումները^[1]:
 - Հնանձնաժողովի իրավասությունների մեջ ներառել նաև մասնավորեցման գործընթացի ուսումնասիրությունը:
 - Հանձնաժողովի իրավասությունների մեջ ներառել բոլոր քաղաքական հետապնդումների դեպքերը՝ չկապելով դրանք միայն հետընտրական գործընթացների հետ:
 - Ընտրական գործընթացների ուսումնասիրությունը դիտարկել պետության զավթման տեսանկյունից և ըստ այդ գնահատել դրանք, ինչպես նաև դիտարկել, թե յուրաքանչյուր ընտրությունից հետո ՄԴ-ում ընտրությունների արդյունքների վիճարկման դիմումները ինչպես են քննել, արդյոք ՄԴ նպաստել է սահմանադրական իրավունքների պաշտպանությանը:
1. Նախագծի 17-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը սահմանում է. «զինծառայողների՝ քրեական հետապնդման մարմինների կողմից որպես ինքնասպանություն որակված դեպքերը, որոնք ողջամիտ ենթադրությամբ կարող էին տեղի ունենալ ոչ կանոնադրային հարաբերությունների հետևանքով.»:

Առաջարկում ենք նշված դրույթի շրջանակում նախատեսել նաև այն դեպքերը, երբ քննարկվել է ոչ կանոնադրական հարաբարությունների արդյունքում ինքնասպանության կամ նույնիսկ սպանության վարկածը, սակայն դեպքը չի բացահայտվել կամ բացահայտվել է ոչ լիարժեք: Առաջարկում ենք նաև անդրադառնալ այս դեպքերով հարուցված քրեական գործերի որակին, եթե խաղաղ պայմաններում մահվան դեպքերով ավարտված քրեական գործերով առկա են իրականացված քննության ամբողջական, օբյեկտիվ, բազմակողմանի չլինելու վերաբերյալ հիմնավոր մտավախություններ:

2. Նախագծի 19-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի ո/ ենթակետի համաձայն՝ հանձնաժողովն իր լիազորություններն իրականացնելիս իրավասու է պետական կամ տեղական ինքնակառավարման մարմիններից կամ դրանց պաշտոնատար անձանցից, բացառությամբ դատարանների ու դատավորների, պահանջել և ստանալ դեպքերի և իրադարձությունների վերաբերյալ պարզաբանումներ, պահանջել անցկացնելու հետազոտություններ և տրամադրել եզրակացություններ պարզաբանման ենթակա հարցերի վերաբերյալ:

Թեև վերոգրյալ լիազորության սահմանումը կարևոր նշանակություն ունի հանձնաժողովի գործունեության համար, սակայն այն դեպքերում, երբ փորձագիտական հետազոտության անցկացումը և համապատասխան եզրակացության տրամադրումը, պայմանավորված նեղ մասնագիտական գիտելիքների անհրաժեշտությամբ, կարող է իրականացնել միայն համապատասխան փորձագիտական կազմակերպությունը, հանձնաժողովը չունի այդ փորձաքննությունները պատվիրելու երաշխավորված հնարավորություն:

Առաջարկում ենք սահմանել փորձագիտական հետազոտություն իրականացնելու համար համապատասխան կազմակերպություններին դիմելու հանձնաժողովի իրավունքը՝ փորձաքննությունների իրականացման ծախսերը պետական բյուջեի միջոցների հաշվին ապահովելու պայմանով:

Կարելի է նախատեսել հնարավորություն, որ նախկինում տեղի ունեցած խախտումների վերաբերյալ Հանձնաժողովը հնարավորություն ունենա դատավորից որոշակի պարզաբանումներ ստանալ այն դեպքում, որ նման հնարավորություն նախատեսված է դատախազից, քննիչից ստանալու դեպքում: Դատավորների կողմից պարզաբանումներ տալու հնարավորությունը պետք է լինի միայն դատավորի համաձայնությամբ և որևէ բացասական հետևանք չունենա դատավորի վրա՝ դատավորի անկախությանը և գործունեությանը միջամտելու տեսանկյունից: Հանձնաժողովի հետ չհամագործակցելը դատավորի գործունեության վրա չի կարող ունենալ որևէ բացասական հետևանք:

Նախագծի 19-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի բ ենթակետով սահմանված է Հանձնաժողովի լիազորությունը՝ կազմակերպելու այցելություններ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, դրանց ստորաբաժանումների գտնվելու վայրեր, ինչպես նաև անձանց մշտական բնակության վայրեր: Այսպիսով, Հանձնաժողովի իրավասության շրջանակներից դուրս են թողնված պետական և համայնքային ոչ առևտրային կազմակերպությունները, այն դեպքում, երբ համապատասխան կազմակերպություններ անմիջական այցելություն կատարելը՝ անհրաժեշտ տեղեկատվության հավաքագրման տեսանկյունից շատ ավելի արդյունավետ կարող է լինել՝ ի համեմատ այն մարմնի, որի ենթակայության տակ է գտնվում այն:

Առաջարկում ենք Հանձնաժողովի իրավասության շրջանակներում ներառել պետական և համայնքային ոչ առևտրային կազմակերպությունները:

Նախագծի 19-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի ե ենթակետով սահմանված է Հանձնաժողովի լիազորությունը՝ ծանոթանալու քրեական, քաղաքացիական, վարչական և կարգապահական իրավախախտումների վերաբերյալ այն գործերին, որոնց վերաբերյալ դատավճիռները, վճիռները և որոշումներն օրինական ուժի մեջ են մտել, ինչպես նաև այն նյութերին, որոնց կապակցությամբ մերժվել է այդ գործերի հարուցումը: Այնուամենայնիվ, այս դրույթը չի սահմանում կարճված և կասեցված (մինչև 2018թ. ապրիլ ամիսը) քրեական գործերի նյութերին ծանոթանալու հնարավորությունը, ինչը վերոնշյալ բացառությունների սահմանման տրամաբանության մեջ որևէ կերպ հիմնավորված չէ:

Առաջարկում ենք նախատեսել կարճված և կասեցված (մինչև 2018թ. ապրիլ ամիսը) գործերի նյութերին ծանոթանալու հնարավորությունը:

Հանձնաժողովը լիազորված է իրավասու մարմիններին ներկայացնել առաջարկություններ՝ տուժած կամ վկայություն սովող անձանց պաշտպանության ծրագրերի մշակման և իրագործման համար:

Առաջարկում ենք տուժողների և վկայություն սովող անձանց պաշտպանության միջոցները և երաշխիքները նախատեսել Հանձնաժողովի գործունեության մեկնարկից: Որպես պաշտպանության միջոցներ կարող են օգտագործվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված պաշտպանության միջոցները:

Հանձնաժողովը լիազորված է նաև իր գործունեության ընթացքում հայտնաբերված տեղեկությունները դրանք հիմնավորող փաստաթղթերի հետ փոխանցել համապատասխան մարմիններին, բացառությամբ սույն օրենքով նախատեսված դեպքերի: Օրենքի նախագծով սահմանված միակ բացառությունը նախատեսված է 5-րդ հոդվածում, որի 2-րդ մասի համաձայն՝ ենթադրյալ խախտումներ կատարած, իրադարձություններում որևէ կերպ ներգրավված, տուժած, վկայություն սովող, ինչպես նաև այլ անձինք չեն կարող ենթարկվել պատասխանատվության հանձնաժողովին հայտնած տեղեկությունների համար, եթե նրանց արարքում առկա չեն վարչական իրավախախտման կամ հանցագործության հատկանիշներ: Նման ձևակերպումից հասկանալի չէ, թե անձն ի՞նչ տեղեկություններ հայտնելու համար կարող է ենթարկվել պատասխանատվության, եթե նրա արարքում առկա չեն իրավախախտումների կամ հանցագործությունների հատկանիշներ:

3. Օրենքի նախագծի 20-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ Հանձնաժողովի անդամի լիազորությունների իրականացման հետ կապված՝ նրա մուտքը անհրաժեշտ վայր չթույլատրելը կամ խոչընդոտելը առաջացնում է քրեական պատասխանատվություն: Միաժամանակ՝ Նախագիծը սահմանում է հանձնաժողովի լիազորությունը՝ անձանց մշտական բնակության վայրեր այցելություններ կազմակերպելու վերաբերյալ: Գտնում ենք, որ մասնավոր անձանց մշտական բնակության վայրեր անարգել մուտք գործելու իրավունքի սահմանումը՝ արգելքի դեպքում համապատասխան քրեական պատասխանատվության սահմանմամբ, խնդրահարույց է անձի բնակարանի անձեռնմխելիության իրավունքի ապահովման տեսանկյունից՝ անհրաժեշտ երաշխիքների բացակայության պայմաններում:

Այլ մասնավոր տարածքների դեպքում նույնպես անհրաժեշտ է սահմանել Հանձնաժողովի անդամի մուտք գործելու անհրաժեշտության հիմնավորումներ, եթե դա անհրաժեշտ է դեպքերի և ճշմարտության բացահայտման, տվյալների ճշտման և այլ նպատակներով:

Նախագիծը չի անդրադառնում նաև այն հարցին, թե ինչպես են պաշտպանվում Հանձնաժողովին հայտնի դարձած տեղեկությունները, արդյո՞ք դրանք ենթակա են ոչնչացման Հանձնաժողովի լիազորությունների դադարումից հետո, թե՞ պետք է տեղափոխվեն որևէ արխիվ: Առաջարկում ենք դիտարկել բազմաթիվ պետությունների փորձը, որոնք ճշմարտության հանձնաժողովի բացահայտումների, ստացված տեղեկությունների, վկայությունների բազայի հիմքի վրա ստեղծել են հիշողությունների շտեմարաններ, արխիվ-թանգարաններ և այլն:

Նույն հոդվածի 8-րդ մասը նախատեսում է, որ Հանձնաժողովի կամ նրա անդամի պահանջած նյութերը, փաստաթղթերը, տեղեկությունները կամ պարզաբանումները սույն օրենքով սահմանված ժամկետներում չտրամադրելն առաջացնում է վարչական պատասխանատվություն: Անհրաժեշտ է վարչական պատասխանատվություն սահմանել նաև սահմանված ժամկետում նյութերը, փաստաթղթերը, տեղեկությունները կամ պարզաբանումները ոչ լիարժեք ներկայացնելու դեպքում, քանի որ տարբեր պետական ինստիտուտներ կարող են շահագրգռված լինել ճշմարտությունը թաքցնելու մեջ:

4. Նախագծով լուծված չէ նաև այն հարցը, թե Հանձնաժողովը ինչպես է վարվում այն դեպքերի հետ, երբ իր ուսումնասիրության ոլորտում առկա գործերը գտնվում են քննության փուլում, օրինակ ոչ մարտական

պայմաններում զոհվածների, կոռուպցիոն գործերի կամ հենց նույն մարտի 1-ի այլ դրվագների մասով՝ ոչ սահմանադրական կարգի տապալման մասին առնչվող:

5. Նախագծի 21-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ «Վկայություն տալու նպատակով յուրաքանչյուր ֆիզիկական և իրավաբանական անձ իրավունք ունի Հանձնաժողովի սահմանած կարգով գրավոր դիմելու Հանձնաժողովին կամ նրա անդամին»: Գտնում ենք, որ Հանձնաժողովին կամ նրա անդամին գրավոր դիմելու իրավունքից զատ պետք է սահմանել յուրաքանչյուր ֆիզիկական և իրավաբանական անձի իրավունքը՝ ներկայացնել գրավոր տեղեկություններ, փաստաթղթեր և նյութեր: Անհրաժեշտ է սահմանել նաև տեղեկությունները էլեկտրոնային եղանակով տրամադրելու հնարավորությունը, ինչպես նաև տեսակապի օգտագործման հնարավորությունը:

6. Օրենքի Նախագծի 22-րդ հոդվածի համաձայն՝ լուսմներին հրավիրված պետական մարմինների կամ տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչները և պաշտոնատար անձինք պարտավոր են ներկայանալ լուսմներին և պատասխանել Հանձնաժողովի անդամների հարցերին, տալ պարզաբանումներ: Ինչ վերաբերում է լուսմներին հրավիրված ֆիզիկական անձանց կամ իրավաբանական անձանց ներկայացուցիչներին, ապա վերջիններս իրավունք ունեն պատասխանել Հանձնաժողովի անդամների հարցերին և տալ պարզաբանումներ: Այսպիսով, Նախագծով սահմանվում է պետական մարմինների կամ տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչների ու պաշտոնատար անձանց պարտականությունը, իսկ ֆիզիկական անձանց կամ իրավաբանական անձանց ներկայացուցիչների իրավունքը լուսմների ընթացքում պատասխանել Հանձնաժողովի անդամների հարցերին և տալ պարզաբանումներ: Նկատի ունենալով, որ Օրենքի նախագծի կարգավորման առարկան 1991-2018 թվականների ընթացքում Հայաստանի Հանրապետությունում տեղի ունեցած՝ մարդու իրավունքների զանգվածային և պարբերական խախտումների դեպքերի ուսումնասիրությունն է, գտնում ենք, որ անհրաժեշտ է նախատեսել նաև Հանձնաժողովի իրավասությունը՝ հրավիրելու պետական մարմինների և տեղական ինքնակառավարման մարմինների նախկին պաշտոնատար անձանց՝ լուսմներին ներկայանալու և Հանձնաժողովի անդամների հարցերին պատասխանելու ու պարզաբանումներ տալու համար:

Առաջարկում ենք լուսմներին հրավիրելու և Հանձնաժողովի անդամների հարցերին պատասխանելու համար նախատեսվող անձանց ցանկում ներառել նաև պետության կամ համայնքների բաժնեմաս ունեցող կազմակերպությունների, պետության կամ համայնքի կամ պետական կամ համայնքային ոչ առևտրային կամ պետության կամ համայնքների բաժնեմաս ունեցող կազմակերպությունների կողմից ստեղծված հիմնադրամների, պետական և համայնքային կազմակերպությունների, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից պատվիրակված լիազորություններ իրականացնող իրավաբանական անձանց պաշտոնատար անձանց:

7. Խիստ վիճարկելի է Նախագծի 29-րդ հոդվածի 5-րդ մասը, համաձայն որի՝ Հանձնաժողովի անդամի՝ իր լիազորությունների իրականացման հետ կապված նամակագրությունը, հեռախոսային խոսակցությունները, փոստային, հեռագրական հաղորդումները և հաղորդակցության այլ ձևերը ենթակա են վերահսկման միայն դատարանի որոշմամբ՝ Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի միջնորդությամբ, եթե դա կապված է ծանր կամ առանձնապես ծանր հանցագործության կատարումը կանխելու կամ բացահայտելու անհրաժեշտության հետ:

Անհասկանալի է, թե ինչպես է վերահսկվելու հեռախոսային խոսակցության՝ լիազորությունների հետ կապվածության հարցը:

8. Նախագծի 32-րդ հոդվածով նախատեսված է Հանձնաժողովի անդամի լիազորությունները դադարելու հիմքերը և թիվս այլոց, սահմանված է Հանձնաժողովի անդամի պաշտոնավարման տարիքի լրացման հիմքը: Նկատի ունենալով Օրենքի նախագծում «պաշտոնավարման տարիք» եզրույթի վերաբերյալ կարգավորումների բացակայությունը, ինչպես նաև նման հիմքի աննպատակահարմարությունը, գտնում ենք, որ անհրաժեշտ է բացառել նշված հիմքը՝ հանձնաժողովի անդամի լիազորությունների դադարման հիմքերի ցանկից:

9. Նախագծի 33-րդ հոդվածով սահմանվում է, որ Հանձնաժողովի կառուցվածքային ստորաբաժանումների աշխատողների քանակը և հաստիքացուցակը հաստատում է Կառավարությունը՝ Հանձնաժողովի առաջարկությամբ: Հատկանշական է, որ նույն կարգավորումն է նախատեսված նաև «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» ՀՀ օրենքով /19-րդ հոդվածի 2-րդ մաս/, որի կապակցությամբ Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (ՏՀԶԿ) Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի երկրների հակակոռուպցիոն ցանցի (ՀԿՑ) Ստամբուլյան հակակոռուպցիոն գործողությունների ծրագրի մոնիտորինգի չորրորդ փուլի զեկույցում մտահոգություն է հայտնվել առ այն, որ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը կարող է փոփոխություն կատարել միայն, եթե դրա հիմնադրումը և մանդատի իրականացումը զերծ լինի քաղաքական միջամտությունից և լիարժեք կերպով ապահովված լինի մարմնի ֆինանսական և ինստիտուցիոնալ անկախությունն ու մատնանշվել, որ «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ մասի կարգավորումները Հանձնաժողովի անկախության համատեքստում խնդրահարույց են, քանի որ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի բյուջեն, հաստիքացուցակը և աշխատակիցների թիվը հաստատվում է Կառավարության կողմից[2]:

Առաջարկվում է Նախագծով սահմանել փաստահավաք հանձնաժողովի անկախության առավել արդյունավետ մեխանիզմներ: Կարևորելով Հանձնաժողովի աշխատակազմի դերը Հանձնաժողովի աշխատանքներում և դրա գործառույթները՝ առաջարկում ենք նախատեսել աշխատակազմի ընտրության հստակ չափանիշներ և աշխատակազմի անդամների ընտրության փուլում այդ չափանիշների հիման վրա թեկնածուների բարեվարքության ստուգում:

10. Նախագծի 35-րդ հոդվածով սահմանված է Հանձնաժողովի նիստերը դոմբաց անցկացնելու պարտավորությունը, սակայն միաժամանակ նախատեսված է հետևյալ դրույթը. «բացառությամբ այն դեպքերի, երբ դա կարող է վնաս պատճառել պետական անվտանգությանը, անձնական կյանքին կամ օրենքով պաշտպանվող այլ իրավաչափ շահերի», նշված դեպքերում Հանձնաժողովի նիստերը անցկացվում են դոմփակ: Կարևորելով փաստահավաք հանձնաժողովի գործունեության թափանցիկության, հրապարակայնության և հաշվետվողականության սկզբունքների պահպանումը՝ գտնում ենք, որ անհրաժեշտ է հստակեցնել Հանձնաժողովի նիստերի դոմփակ անցկացնելու հիմքերն՝ բացառելով «օրենքով պաշտպանվող այլ իրավաչափ շահերի»՝ տարաբնույթ մեկնաբանությունների տեղիք տվող հիմքով հանձնաժողովի գործունեության հրապարակայնության սահմանափակումը:

11. Նախագծի 39-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ հանձնաժողովը կազմավորված է համարվում հանձնաժողովի բոլոր անդամների ընտրությունից հետո: Կարծում ենք ճիշտ լուծում չէ, պետք է նախատեսել օրինակ $\frac{3}{4}$ որ ժամանակ չկորցնի հանձնաժողովը, քանի որ օրինակ 1 թեկնածուի առաջադրման հարցը կարող է ձգձգվել կամ նրա ընտրության հետ կապված խնդիրներ առաջանան: Սա չպետք է տապալի հանձնաժողովի գործունեությունը:

Այլ առաջարկներ.

1. Ապահովել ոչ միայն կարճված, այլև մինչև 2018 թ. ապրիլ ամիսը կասեցված գործերի վերաբերյալ գործերի ուսումնասիրությունը:
2. Առաջարկում ենք Հանձնաժողովի գործունեության ժամկետ սահմանել երեք տարին, ևս մեկ տարի ավելացնելու հնարավորությամբ: Այս ժամկետը պետք է կազմվի այն տրամաբանությամբ, որ Հանձնաժողովի գործունեության ժամկետը չհամընկնի իշխող քաղաքական ուժի իշխանության ժամկետի հետ:
3. Քրեադատավարական, վարչական և քաղաքացիական օրենսդրությամբ սահմանել Հանձնաժողովի կողմից գնահատված մարդու իրավունքների կոպիտ խախտման փաստերի նկատմամբ վաղեմության ժամկետների չկիրառման մասին դրույթներ՝ խոշտանգումներից զերծ մնալու իրավունքին և կյանքի իրավունքին առնչվող դեպքերում:

Առաջարկները կազմվել են հետևյալ կազմակերպությունների կողմից՝

Բաց հասարակության հիմնադրամներ – Հայաստան
Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակ
Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն
Իրավունքների պաշտպանություն առանց սահմանների ՀԿ
Իրավունքի պաշտպանության և զարգացման հիմնադրամ
Կարեն Թումանյան, փաստաբան
Ռոբերտ Ռևազյան, փաստաբան

[1] https://rm.coe.int/16805cd111?fbclid=IwAR3fHIzeJy99QIzXbyEdMk1Uz_nWleXGX5kUEJ9G394iinO3i4XN-2fqQgE

[2] Մանրամասն տե՛ս՝ Anti-corruption reforms in Armenia 4th round of monitoring of the Istanbul Anti-Corruption Action Plan <https://www.oecd.org/corruption/acn/OECD-ACN-Armenia-4th-Round-Monitoring-Report-July-2018-ENG.pdf>: